

ՀՀ Արմավիրի մարզպետի ուղերձն Ուսուցչի տոնի առթիվ

05.10.2015

Հայ դպրոցի սիրելի ուսուցիչներ

Շնորհավորում եմ ձեզ մասնագիտական այս գեղեցիկ տոնի՝ Ուսուցչի օրվա առթիվ: Այսօր մեր երախտագիտության ու մեծարանքի խոսքն ենք ուղղում Ձեզ, կրթության ու դաստիարակության գործի հայրենանվեր մշակներ:

Հայ ժողովուրդը միշտ բարձր է գնահատել ուսուցչին եւ խոնարհվել նրա վաստակի առաջ, դարեր շարունակ ակնածանքով և մեծարանքով է արժևորել մանկավարժի գործը՝ նրան վերապահելով նոր սերնդի կրթության և քաղաքացու ձևավորման դժվարին աշխատանքը:

Մեծ պատասխանատվություն և ծանր բեռ է ընկած ձեր ուսերին: Դուք կրթում ու դաստիարակում եք մեր երեխաներին, ովքեր մեր հերոսական երկրի ապագան են ու վաղվա տերը: Այդ ապագան մեծապես կախված է նաև ձեր ամենօրյա տքնաջան աշխատանքից, նրանից, թե ինչպես եք դուք այսօր իրականացնում այդ չափազանց կարևոր առաքելությունը: Մանկավարժն է ճանապարհ բացում և սովորեցնում քայլել այդ ճանապարհով: Առաջին հերթին ձեզանից է կախված, թե ինչպիսին կլինի անձի, քաղաքացու հոգեկերտվածքն ու մտածողությունը:

Դուք Ձեր առաքելությունն իրականացնում եք արժանապատվորեն և անտրտունջ, որովհետև գիտակցում եք, որ ընտրել եք մի ճանապարհ, որից երբևէ չեք հրաժարվելու՝ անկախ ցանկացած դժվարությունից, քանզի ուսուցիչը ավելի շուտ կոչում է, քան թե մասնագիտություն: Այսօր էլ բարձր է ուսուցչի դերը մեր երկրի առաջընթացի գործում:

Միևնույն օրվա ուսուցիչներ,

Շնորհակալ ենք ձեր վեհանձն եւ բոլորին շատ անհրաժեշտ աշխատանքի համար: Շնորհակալ ենք, քանի որ անգնահատելի և մեծ է ձեր դերը մատաղ սերնդի կրթելու եւ դաստիարակելու ազգանվեր գործում: Շնորհակալ ենք ձեր նվիրվածության եւ անխոնջ աշխատանքի համար: Ուսուցչի նկատմամբ սերն ու հարգանքը յուրաքանչյուրը պահպանում է ողջ կյանքի ընթացքում: Ժողովուրդը բարության ու բերկրանքի լուսապսակով է զարդարում Ձեր անունը՝ փառաբանելով ուսուցչի ազնվագույն վաստակն ու բարի գործը:

Միևնույն օրվա ուսուցիչներ, մեկ անգամ ևս շնորհավորելով բոլոր ուսուցիչներին, ինչպես նաև վաստակած հանգստի անցած մեր բոլոր մանկավարժներին մասնագիտական տոնի կապակցությամբ, մաղթում եմ տոնական բարձր տրամադրություն, առողջություն, անձնական երջանկություն ու բարօրություն և հաջողություն ձեր ազգապահպան գործում:

Ձեր աշխատանքում շարունակեք լինել վստահ, բարեխիղճ ու պատասխանատու: Շնորհավո՛ր տոնդ, ուսուցիչ: Խոնարհում քեզ և ամենայն բարիք:

Հարգանքով՝

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ